

ԲԱԺԱՆՈՐՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուշկարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի հա-
մար տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՅԵԼԻ
—(—)
Գրութիւնք եւ չկէ տրուի
—(—)
Իրանացիական տղոր 20 սան-
քիւմ ե. Լրեխիւն աւելի աւե-
զաններու համար 20 ՕլՊ
գնդէ կրողայ :

ՇԱԲԱԹ

Նամակ եւ դրամ դրկել
Խ. Բարսեղյանի հասցիին

Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна.
Redaction du journal
«Charjoun»
Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Отговорникъ: А. СУКЯСОВЪ.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Բ.

Տեսէ՛ք ինչ գովելի ճիգեր կը
թափին ուրիշ ազգեր իրենց պա-
նական ցրուած մասերուն մէջ
եղբայրակցութեան թելը չը խլել-
լու համար: Անհուն, անվերջ
տքնութիւն մըն է որ կը պոռթ-
կայ ամէն օր, առաջդիմելու
մտաբան, զանցառելի քանա-
կութիւն մը չդառնալու համար:
Անցեալ օր, համազերման ըն-
կերութեան մը խօսքը կընէինք:
Երեւակայեցէք որ գերմանացին
գոհ չմնայ ազգերու շարքին մէջ
իր բռնած գիրքէն, և կը փափագի
ի մի ձուլել ամէն ինչ որ գեր-
մանական է տիեզերքի մէջ,
թէեւ իրեն այդ ցրուեալ արե-
նակիցները ո՛չ թուրք գաղան
վարչութեան մը ներքեւ կը տա-
ռապին և ո՛չ ալ մարդակեր քրք-
րերու բերանը նետուած են:

Ամէն այն ազգերը ո՛ր մայրենի
հողէն դուրս ձգուած են, օտա-
րութեան մէջ գիրար փնտռելու,
իրարու միտք հասկնալու հետա-
մոտ են: Մենք մինչև հիմա
այսպիսի բան մը խորհած ենք.
թէեւ ամենէն աւելի պէտք ու-
նինք ինքնամիտքութիւն և համե-
րաշխութեան, քանի որ բարձ-
րագոյն ձեռքի մը հողածութե-
նէն զուրկ մենք մեզի համար
կառավարող և կառավարուող պի-
տի ըլլանք:

Ազգին իսկապէս օգտակար ըլ-
լալու գործը շատ բարձր է ար-
տասահմանի ամէն մէկ մասին ա-
ռանձին ուժերուն համար: Ամէն
արգիւնք կախում ունի անոնց
ամենուն հաւաքալան աշխատակ-
ցութենէն, այն հրեզէն չըջա-
նակէն որուն վրայ կը խօսէինք
անցեալ անգամ:

Այսօր, արտասահմանի մէջ
մենք ունինք նկատելի ուժեր.
խելք, զբամ ու բազուկ չեն
պակսիր մեզ: Խնդիրը կը մնայ
չահագործել զանոնք, լոյս աշ-
խարհ հանել այդ թանկագին
գանձերը, ու անոնցմէ առաջ բե-
րել ներդաշնակօրէն լարուած,
դէպի որոշ ուղի մը ընթացող

մարմին մը:
Ի՞նչ բան է որ կարգիլէ արտա-
սահմանի հայերուն տիեզերական
դաշնակցութիւն մը կազմելու,
և վերջ տալու այն քառասուն վի-
ճակին որ գոյութիւն ունի այսօր
իր մէջ: Եթէ այս պահու ահ-
նալի մը նետենք արտասահմանի
այլ և այլ մասերուն վրայ, շատ
յուսադրական պատկեր մը պիտի
տեսնե՞նք:

Արդարեւ ամէն տեղ գործունէ-
ութիւն մը նկատելի է: Ակումբ,
միութիւն, լսարան, դպրոց,
թերթ, ամէն բան կարգին է.
միայն թէ ներդաշնակութիւնը
կը պակսի, զիրար հասկնալ ու
ճանչնալ չկայ, այնպէս որ ազ-
գին օգտակար ըլլալու անկեղծ
փափագէ մը մղուելով հանդերձ,
շատ անգամ հակառակ ուղղու-
թեամբ, կունակ կունակ կը քա-
լենք: Ահա այդ է մեր ամենէն
ցաւալի կողմը արտասահմանի
մէջ:

Իւթորի՞ մըն է արդեօք ար-
տասահմանի ամբողջ հայութեան
ի մի ձուլման գաղափարը: Ան-
հնարի՞նք է այնպիսի կարգադ-
րութիւն մը ընել, որ մեր մաս-
նակի գործունէութիւնը յումպէտս
չվատնուի: Իրտեցէք որ խնդիրը
ո և է գոհողութիւն չենթադրել,
այլ միայն գործելու եղանակի
նոյնութիւն կը պահանջէ:

Համազերման ընկերութիւնը
ի՞նչ ըրաւ, երբ որոշեց այն ի-
տէպը որուն պիտի հետամտի:
Միւսիսի մէջ համաժողով մը
գումարեց աշխարհիս չորս ծայ-
րերէն հասած պատուիրակներու
ներկայութիւնով, Հաղորդակցու-
թեան արդի գիւրութիւնները
հեռաւորութիւնները ջնջած են:
Ո՞վ կարգիլէ մեզ որ մենք ալ,
արտասահմանի հայերու հակոյ հա-
մաժողով մը չգումարենք, գծե-
լու համար այն յայտագիրը ու-
րուն համեմատ պէտք է ուղղենք
մեր գործունէութիւնը: Աշ-
խարհիս բոլոր խնդիրները ժո-
ղովներով վճռուած են: Եւ երբ
ամենէն աննշան ընկերութիւնը
իսկ իր ժողովը կունենայ, «ար-
տասահմանը» չոր իբր միաձուլ
մարմին մը ընդունիլ կուզենք,

չա՛րժեր որ ունենայ իր համա-
ժողովը:

Եթէ մեզ անձանթ ուրիշ մի-
ջոց մը գոյութիւն ունի այդ ան-
հրաժեշտ դարձած համերաշ-
խութիւնը գոյացնելու, աւելի
լաւ: Միայն թէ նոր գիւտերը
ժամանակի կարօտ են, և խըն-
դիրը անբացատրելի աստիճան
ստիպողական կը թուի մեզ, և
այս ստիպողականութիւնը ա՛լ
աւելի կը շեշտուի, երբ աչքի
առնու կը բերենք մեր քառաս-
յին վիճակը, ու հայրենիքը՝ որ
իր աւերակներով, շղթաներով
ու որբերով մեզ կը նայի ու շատ
բան կը սպասէ մեզմէ:

ԳԱՄԵՐ-ԱՐՇԱԽՈՐ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Փ. Պոլիս, 19 Հոկտ.

Հայկական ընթերցարանի ընկե-
րութիւնը կը շարունակէ իր գոր-
ծունէութիւնը: Ընթերցարանը ար-
դէն բացուած էր. գիշերային զու-
րոցը նաեւ հաստատուեցաւ: Աշա-
կիրտներու թիւը հետզհետէ կը բարձ-
րանայ: Գասերն են հայերէն, ֆրան-
սերէն, պոլիկարերէն, թուրքաբան-
թիւն, ասորականութիւն եւ արեւ-
մտական ձայնագրութիւն: Ուրախա-
լի է որ Հայաստանցի գործատուները
մեծ կոտորածով կուզան իրենց մայրե-
նի լեզուն սովորել: Լսարանը կը
չարունակուի: վիճարանական ժո-
ղովները կը կազմուին: Մարմնամարզի
ճիւղը միայն տակաւին բացուած չէ
չէնքին անյարմարութեան պատճա-
ռով, Բայց կը յուսանք թէ այդ ալ
կը բացուի քիչ ժամանակէն:

Գրասիրաց եղբայրութիւնը կեն-
դանացաւ: Նոր վարչութիւն մը կազ-
մուեցաւ որ կը ջանայ գանձել ա-
պստիկ ամսագրները, զասակար-
գել զիրքերը եւ աւելցնել անգամ-
ներու թիւը: Արդիւնքը շատ յաջող
եղած է: Գրասիրաց անդամներ
աւելցած են եւ ընկերութեան զը-
րամբ որ 1,400 ֆրանքի կը հասնէր,
բարձրացած է 2,000 ի: Հայկական
ընթերցարանի եւ գրասիրաց եղ-
բայրութեան միջեւ յարաբերու-
թիւնները շատ լաւ են եւ ընդհա-
նուր փոփոխ մը կայ Հայկական ըն-
թերցարանը ժողովել գրասիրացին
մէջ: Ատոր համամիտ եմ հողով մարմ-
նով: Իրենց նպատակը միեւնոյն
ըլլալով, ուժերու փոխակար բա-

ժանու՞նք երկու գատ ընկերութիւն-
ներ կազմել: Արդէն անմիջական
պէտք կայ մասնաւոր շէնքի մը, ուր
կազմակերպուին ազգային ներկայա-
ցումներ, լսարաններ, ընթերցա-
րան, գիշերային վարժարան եւ
մարմնարդի յարմար վայր: Մեծ փա-
փաք կայ քիչ ժամանակի մէջ յանուն
ազգին կառուցանել զայն, եւ երկու
ընթերցարանի միացումը մեծ զարկ
պիտի տայ ատոր իրագործումին: Հո-
ղին համար դրամը արդէն պատրաստ
է, եւ կը յուսանք թէ շէնքն ալ կը-
նայ շինուիլ մեր հարուստ վաճառա-
կան հայերու աջակցութեամբ:

Նորընտիր Թաղական Խորհուրդը
սքանչելապէս կը կատարէ իր գործը:
Շարաիական մէկ կամ երկու նիստեր
կը կազմէ եւ կաշխատի կարգ կանոն
մտցնել քառսին մէջ: Վերջերս կազ-
մեց Աղքատախնամ ընկերութիւն մը
որ առաջին փորձն է Փ. Պոլսի տե-
ղացի եւ օտարական կարօտ հայերը
խնամելու կազմակերպուած մարմինի
մը ձեռքով: Թաղական Խորհուրդը
աւելի զօրաւոր դիրք մը գրաւելու
համար, ուրիշ քաղաքներու սովո-
րութեան համեմատ, վաւերացնել
ստուած է իր ընտրութիւնը Պուրկա-
րիոյ ներքին գործերու նախարարու-
թենէն: Ուղեւով հասկնալ այն պատ-
ճառները որոնցմով անազնին պարտք
մը գոյացած է, եւ վտանգի տակ
դրած ազգային կալուածները եւ
հաստատութիւնները, հրաւիրած է
Հոգաբարձութիւնը եւ նախկին Թա-
ղական Խորհուրդները որպէս զի բե-
րեն իրենց հաշիւները: Հրաւիրած է
նաեւ զազգային բոլոր յանձնա-
ժողովները որպէս զի գրաւոր կերպով
ներկայացնեն իրենց հաշուեկշիռ-
ները: Գրասիրաց արժէք քանի ան-
ձերէ զատ այս մարմիններ չեն փու-
թացած իրենց հաշիւները ներկայե-
լու: Կամք չերեւար հաշիւ տալու եւ
կը վախցուի թէ ամենէն եւիտ մի-
ջոցներուն գիմել հարկ ըլլայ: Ընդ-
հանուր ազգային մըն է որ կը բարձ-
րանայ. «մենք գո՞ղ ենք որ հաշիւ
տանք»: Կամ շատ չար են կամ շատ
տիւմար, պէտք է գիտնան թէ գողերը
եւ աւազակները միայն կը վախնան
հաշիւ տալէ, իսկ պատուաւոր մար-
դերը միշտ հաշիւ կուտան: Զրոյց մը
կը շրջի թէ հաշիւ չը տալու համար,
այս պարտները շատ ստորին միջոցի
մը պիտի դիմեն, զոր մէկ քանի ան-
գամ արդէն փորձեցին: Բայց Թաղա-
կան Խորհուրդը կրնայ բացարձակա-
պէս վստահիլ զարգացած զասակար-
գին աջակցութեան վրայ:

Իսկ զպրոցը: Ա՛հ, ատկէ աւելի

խեղձ վիճակ անկարելի է երեւակա-
յել : Ներթափանցող , բարոյական եւ
մտաւորական ահապին սնանկութիւն
մըն է որ հրապարակ կողմէ : Հոգա-
բարձութիւնը , իր հինգ օգնական-
ներով , բան մը չը կըրցաւ ընել եւ
պիտի չը կըրնայ : Իմ կարծիքով , Թա-
ղական խորհուրդի երկու անդամները ,
որք օգնականներու շարքին մէջ կը
գտնուին , մեղսակից չըլլալու համար
բարոյական սնանկութեան , մեկնե-
լու են բողոքելէ յետոյ : Որչափ ժա-
մանակ գործակցին անոնց հետ , յա-
ռաջգիմական դասակարգին ցաւին
եւ զայրոյթին պատճառ պիտի ըլլան :
Արդէն սկսած են անոնք ժողովուր-
դին մէջ տարածել թէ ներկայ զըպ-
րոցական խղճակի վիճակին պատճառ
յառաջգիմականներու գործակցու-
թիւնն է : Այս մեթոտով կը կարծեն
թէ կրնան զպրոցական ներկայ խղճ
վիճակը շարունակել եւ միեւնոյն
ժամանակ պատասխանատու թեւէ
զերծ մնալ : Այս ծուղակին մէջ պէտք
չէ իյնալ : Պէտք է հասկցնել թէ 14
տարիներէ հետէ զպրոցը անկարողնե-
րու յանձնող անձերը չեն կրնար ու-
րիշները պատասխանատու բռնել : Պա-
րոններ , բողոքելու իրաւունքը շա-
տոնց կորսնցուցած էք , մենք միայն
ունինք այդ իրաւունքը , երբ ժա-
մանակը գոյ պիտի սեանէք թէ ինչ-
պէս կը բարեկարգուին զպրոցները :

Թղթակից

Շուշուա , 19 Հոկտ.

Միւլիթարական է տեսնել որ քա-
ղաքին մէջ կըթական գործին կա-
րելի եղածին չափ ուժ եւ մղում տա-
լու ջանքեր չեն խնայուիր ո՛չ ու-
սուցչական մարմնոյ եւ ո՛չ Պատ. Հո-
գարարձութեան կողմէն :

Տեղացիները հակառակ իրենց նիւ-
թական տխուր կացութեան կրնան
պարծիլ այժմ թէ ունին իրենց արա-
կան եւ իրական բարեկարգ վար-
ժարանները :

Այստեղ սեպտ. 15ն ի վեր պաշտօնի
կոչուած են ջանասէր ուսուցիչներ :
Արական վարժարանի անօրէնն է Պ.
Ստեփան Ապագանան որ կը հակէ
Ստեփան իրական վարժարանի վրայ եւ
որուն փորձառութեան պիտի օգ-
տուին անշուշտ այդ երկուստ վարժա-
րանները : Արական վարժարանը
ունի 80է աւելի աշակերտներ եւ ու-

ՎԱՐԳ-ՊԱՏՐԵԿՈՒԼԻ ՅԵՆԱՍԱԿԱՐԱՆԸ (44)

Արփիարը ներվածներին մէջ չէր .
ոստիկանները ինձ պատմում էին թէ
վերջը ինչպէս նա ընկել էր Նազիմի
ստեղծը , աղաչել , պաղատել այս
խօսքերով .

— «Էֆէնարմ , զոր թարբընը , բէն
հէփաի կարբընը զօվլէթ իշիւն , նէ
խստէյօրսընը » :

Այդ լացը , ստրկական քծնումը
արել էր այն մարդը , որը առաջա-
ղէմ գաղափարներին գրչով զինված
զինուոր էր տաճկահայ կեդրոնում .
եւ յուսակութիւն ունէր յեղափո-
խական գործունէութեան մէջ մեծ
զեր խաղալ ու չէֆ լինել յեղափո-
խականներին :

Նազիմը զգած հայ հանճարիզ
ստրուկի քծնումից , եւ զգա-
լով թէ Արփիարի պէս մարդը ինչ-
քան օգտակար կը լինի իր համար ,
վազում է պալատ գիշերով , եւ կէս
գիշերին Արփիարի աղատման թուղթը
բերում : Արփիարը գիշերը կառքով
դառնում է իր տունը . եւ շուտով Ա-
րփիարի մէջ իր հոչակաւոր մեղայա-

րիչ երկու ուսուցիչներ եւս , որոնք
նոյնպէս պարտաճանաչ եւ աշխատա-
ւեր երկուստարդներ ըլլալ կը թուին :
Իսկ իրական վարժարանի ուսուց-
չուհին է Օր. Վերպին Յակոբեան որ
վարժարանը կը կառավարէ օգնական
ուսուցչուհիի մը հետ : 60է աւելի ա-
շակերտուհիներ կան : Երկու վար-
ժարաններու մէջ պուրկարերէն լի-
զուն կը դասախօսէ պուրկար ուսուց-
չուհի մը :

Պատ. Հոգարարձութեան մասնակ-
ցութեամբ երկու շարքով անգամ մը
ուսուցչական ժողովներ կը գումար-
ուին երկուստ զպրոցներու ներքին
բարեկարգութեան եւ յառաջգիմու-
թեան վերաբերեալ խնդիրներով
զբաղելու համար :

Թէև զպրոցները հազիւ մէկուկէս
ամաէ ի վեր վերաբացուած , սակայն
կարելի է այժմէն իսկ խօսիլ անոնց
մէջ տիրած կարգապահութեան եւ
յառաջգիմութեան վրայ :

Մեր անկեղծ շնորհաւորութիւն-
ները կը յայտնենք ուսուցչական
խմբին եւ Հոգարարձութեան , յու-
սալով թէ նոյն ճշգրտութեամբ պիտի
յարատեն իրենց արդիւնաւոր
գործը :

Հոս տեղն է յիշելու թէ իրական
վարժարանի բոլոր նիւթական պէտ-
քերը կը հոգայ սեղանի իրական
սեռի քուէով Տիկնանց խնամակա-
լութիւն մը , որ ոգի ի բոլին կաշ-
խատի իր վարժարանը բարեկարգ եւ
արդիւնաւոր վիճակի մը մէջ պահե-
լու համար : Խնամակալութիւնը գո-
յութիւն ունի գրեթէ 17—18 տա-
րիներէ ի վեր եւ մինչեւ այժմ շատ
մեծ օգուտներ տուած է կրթական
գործին :

ՎԷՏԱ

ԻՄ ԱՌԱՋԻՆ ՍԻՐՈՒՀՈՒՆ

(Aegus parviflora) (Aegus parviflora)

Թո՛ղ սիրային երգը , թէև զեռ
երկուստարդ , բայց սիրոյ համար ար-
ղէն ծերացած եմ :

Մոռացիր որ երբեմն մի անուշ
նայած քիչ կամ հառաչանքիդ հա-
մար արցունք էի թափում . այն ժա-
մանակ չըթաղակապ ստրուկ էի , քո
մի ժպտիդ համար առում էի ամբողջ
աշխարհը , եւ , յիմարբար , քեզ

զիրը գրում , ի հարկէ ճիշդ թական
դիպրօմատութիւն բանեցնելով , որ
վերջը իր ազգին աւելի օգտակար
լինի
Բոլորովին անմեղ մարդիկ ներման
են արժանանում , հայոց Մայր կեկե-
զեցում հրաժարիմք ասում եւ հաւա-
տարմութեան երգում տալիս . իսկ
Արփիարեան , առանց այդ բոլորի ,
Մարիմեանի նամակով եւ նրա ցուց-
մունքով հաստատուած ազգեցիկ յե-
ղափոխականը , ազատվում է թուրք
վարչութեան ձեռքից , որը ամենա-
չնչին փաստով անգամ՝ յանցաւոր
հային ցմահ բերդարգելութեան է
դատապարտում , միթէ զարմանալի
չէ՞

Որչափ զղւելի վարմունք . լուսա-
ւոր գաղափարների աէր համարված ,
հայ ժողովրդի համար աշխատող հրա-
պարակախօս , նախապաշարմունքի-
ների եւ հնուրիւսան զէմ կուռղ , ի-
րան հանճար եւ թիւրքահայ Արծ-
րունի համարող , վերջապէս յեղափո-
խական ազգեցիկ հայր իր շնչին գո-
յութիւնը պահպանելու համար , պա-
տրակ բռնելով ազգին օգտակար լի-
նելը ապագայում , արտասվում է ա-

սիրելի պաշտամունքի հասցնում . . .
Մոռացիր այն յիմարութիւնները .
քո սէրը էլ չի ապագայում սիրաս եւ
չէ յուզում . դու էլ չես կարող սեղ
բունել այնտեղ , որ հիմա թագաւո-
րում է հանրային վիշտն ու ցար . . .
Դու մանկամարդ ես եւ հրաշալի
ձայն ունես . լսիր թէ ինչպէս են
լալիս թշուառները , այդ ձայնից
սիրաս միտում է , պատուում եւ ու-
զում թոչել այնտեղ , որ ժողովրդի
արիւնն է վազում . . .

Թո՛ղ սիրոյ մեղկ խօսքերը , ամա-
չիր , լսիր թէ ինչպէս հեծում են ան-
ատուն ու գետը , սուլում է կատաղի
քամին եւ դարեւոր ծառերը խորտա-
կում . նրանք սզում եւ պատմում են
ժողովրդային հին եւ նոր ասնջանք-
ների մասին . . .

Դու էլ , սիրուհիս , երգիր , այդ-
պիսի երգեր , աղաչում եմ : Երգիր՝ թէ
ինչպէս եղբայրը ծախում է եղբորը ,
թէ ինչպէս ոչնչացնում են ծաղկա-
փթիթ ու թարմ ուժերը , ինչպէս
սզում է այրին եւ անտուն անաէր
թափառում են խղճուկ որբիկները . . .

Ահա այդ երգիր , եթէ ոչ կորիր ,
աչքիցս հեռացիր . սիրաս պայթում է
եւ ուզում թոչել այնտեղ , որ եր-
կիրը որոտումով պատուում է մահա-
մեթներին զերեզմանական երգերից ,
ուր խոր անդունդներում սուլում է
չիկացած գնդակը եւ ուր մահը մար-
զուն գիմաւորում է անուշ ժպտով
ու ցուրտ շիրիմը հեշտալի հանգստա-
րան դարձնում :

ՎԱՐԴՈ

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՅԻՇԱՍԱԿՆԵՐ

—) (—

Գրիգոր Նարեկացին , Հայաս-
տանի այդ ժողովրդական ընտա-
նի սուրբը , որուն անունը մեր
մայրերն ու հայրերը սրտի ան-
կեղծ խանդով մը ընրան կառ-
նէին , վտանգուած «օճախին» ու
տնանկ կեանքի վերածնութեան
սուրբն է : Ամենէն անյաշող
գործերուն ու ապարդիւն ձեռ-
նարկութեանց մէջ , նորա անուան
ու յիշատակին ուխտ կընէ վասպու-
րականի ու Տուրուբերանի հայ
գեղացին : Ու շատ անգամ իր

«մուրաբը» կատարելով , այդ
հոգեշունչ հօր անունը , իր գը-
րած երկնաշունչ զրքին հետ
անրաման կը մնայ հայ մայրերի
սրտէն ու մտքէն . գրեթէ ամէն
հայ տուն Նարեկ մը կայ , ու
ամէն հայ մարդ՝ Նարեկացիի
գրուածքէն գէթ «ընկալ քաղց-
րութեամբ Տէր Աստուած հօր ,
դաւնացողիս զաղաչանս մատր
գթութեամբ առ պատկառեալս
գլխօք» են . են . աղօթքը , հոգիի
անուշ արտայայտութիւնն , զոյ
գիտէ ու իրիկուան անկողին մըա-
նելէ առաջ Շնորհալի մէկ քա-
նի աղօթքներ ի հետ արտասա-
նելով , սրտի ու մտքի անարա-
տութեամբ՝ հայրենի հողին վը-
րայ , պապեանական օճախին քո-
վիկ իրենց ճիժ ու պիժին հե-
կը քննայ . . . : Պոռայ վանքը
որ նուիրուած է Գրիգոր Նարե-
կացիի անուան , գրեթէ 8-900
տարիների հնութիւն մը կը ներ-
կայէ : Յունական կամ հայկական
հին սովորութեան համեմատ ,
ներքնատաճարը , արտաքին գա-
ւիթէն առանձին դռնով մը հա-
զորակցութեան մէջ գրուած
լինելով , զաւիթ խնուող ժո-
ղովուրդը , պատարագիչ քահա-
նան միայն վերաբերումին ու
սաղմոս ասացէք են . ի պահուն
հաղի կրնայ տեսնել , Հոս կար
մաղաղակալ ձեռագիր արձա-
թապատ նարեկ մը , վանքի շի-
նութեան թուականին չափ հին ,
որուն յիշատակարանը ընդօ-
րինակած է ի՛նչ ուրիշ շատ մը կա-
րեւոր վանքերի ձեռագրերի յի-
շատակարաններին հետ . աննցմէ
ոմանք Պօլիս մէկ երկու անգամ
ձերբակալմանս միջոցին Հիւսի
պէյի ձեռք մնացին՝ ու ոմանք որ
աւելի խնամով թաղցուցած էի ,
Պօլիս՝ բախտէր բարեկամի մը
պահ տուի : Այդ գրչանարեկը ,
հայկական ընտիր գեղագրու-
թեամբ ու շնորհալի նկարներով

մեղայական թուղթը : Բանտի տան-
ջանքը , չըթայները , ցմահ բերդա-
գելութիւնը եւ մահաւան պատվը
գերազատում էին այն կեանքից եւ
ագատութիւնից որ պէտք է ստանա-
լին Սուլթանից՝ ստրկական աղա-
չանքով ի հարկէ յայտնի ծառայու-
թիւններ խոստանալով եւ աղտոտե-
լով հայ յեղափոխութեան զեռ նոր
ծածանող անրիժ գրօշակը :

Դէ՛ , մաքուր հայ մարդիկ , համե-
մատեցէք այս վերջիններին թուր-
մորթ Արփիարի հետ : Մենք համոզ-
ված ենք թէ Արփիարի պէս դիպր-
մաւ եւ խելացի յեղափոխական կար-
ծուածները կը ծագեն Գր. Գլեհան-
ներին եւ կասեն . «նպատակը ար-
դարացնում է միջոցը» ճիշդ խոսակա-
ն հոչակաւոր նշանաբանը : Սակայն
կատակաւելի է որ Արփիարեան իր այդ
ստորագրող միջոցը գործ գրած միջ-
ցին , բացի իր անձը փրկելուց , մի
ուրիշ նպատակ ունենար . գոնէ այդ
պէպքում իր վարմունքը մի քիչ կը
մեղմանար :

(Շարունակելի)

զարգարուն, մեր նախնեաց գեղազարական նրբացած ճաշակին փայլը կուեցնեն: Այս ու նման ընտիր գրչագրքեր ու նկարներ գրեթէ բազմաթիւ էին Հայաստանի ներքին գաւառներէ վանքերի ու գիւղերի մէջ:

Պոռայ վանքը ունէր մի վարդապետ, մի անտես, քանի մը մշակներ ու խոտապններ. իր նիւթական հարստութիւնն էին այն հողերն ու արտերը որոնք նախնիքներէն իրեն նուիրուած են: Նիւթական հարստութեան հանդէպ ոչինչ կար բարոյական:

Շարաթ իրիկուն ժամ (Բ.Տ.) 12 անցած էր, երբ մենք վանքի նախագուռնէն ներս մտանք: Աղթամարայ միաբաններէն Աթանաս վարդապետ իր նազելի անտեսութիւն հետ եկեղեցոյ դարասոր տաճարին գլխաց կանգնած՝ պլպլացող խղոտ ճրագի մը անցօր լուսով լոյս զուարթ կերպէր այդ վեհ տաճարին հին կամարին տակը: . . .

Վարդապետը իր գիտցած եղանակով կերպէ նախ ամեն բան, ու մենք լուռ և անշշուկ խոհերի ամենէն վսեմին մէջ թաղուած՝ մտքով դէպի նարեկացի հայրը վերացած՝ կերպնք շատ բաներ . . . Եկեղեցիի աւարտումէն ետք, վարդապետը իր ծանօթ հիւրասիրութեամբ կարելի եղած գիւրութիւնը կուտայ մեզ, ու մեր աղջանաց վրայ մեր գիշերելու տեղը կը պատրաստէ, վանքի շրջափակի քով առատ հոտող զուլալ աղբիւրի առ ընթեր գտնուած գրախոտանման դարաստանին մէջ:

Հպլի թէ մենք մեր տեղը նստած ծառերի ու պուրակների սաղարթներով շրջապատուած իշխեռին էն փշուղ կենսատու օդը կը ծծէինք, գիտելով հայրենիքի աստեղազարդ երկինքը, որ յարգը դողինք ու «չորոցքին» հետանհամար աստղերով վառուած պայծառ ջահի մը պէս կը պլպլայ մեր գլխին վերեւ, ահա մէջ տեղ կուգայ խուլիկայ կարմիր գինին ու Պիթիսի գլուխ օդին:

Առաջին գաւաթը Աթանաս հայր սուրբ կը խմէ իր հիւրերին բարի գալուստ մաղթելով, ու մենք ամենքս կը հետեւինք իր օրինակին: Մէկ կողմէն Պիթիսի խորովածը միւս կողմէն վանքի տապալած հաւն հայրենիքի ուրիշ համազամների հետ կը գոռեն մեր ստամոքսները: Կուտենք կը խմենք ու կերպնք, ողջոյն «ընդ քեզ Հայաստան, մեր գիւցազանց գերեզման, ողջոյն հայոց թագուհի, պատկեալ փառքն հայրենի, ևն. ևն.» աղգային ամենէն վառվառն երգերը: Գրեթէ կէս գիշերը անցած էր՝ մեր սեղանը վերնալով մենք ալ մեր նստած տեղերը, կէս քուն կէս արթուն, օրուան ամենակերպ ապաւորութեանց ներքեւ կրնկողմանանք, գիշերուան փշուղ կեն-

ստառ սիւքն ու ծառերի կատարները թառուց թռչունների գայլայլէն օրօրուած:

ՆԱՀԱՊԵՏ

(Շարունակելի)

ՊԻՍՏՈՒՆԻՔԻ ՆՈՒՆԵՆ

Կիմանամ որ «Իրաւունք»-ի արգոյ խմբագրատեղը այդ թերթին մէջ իր գործօն մասնակցութիւնը չէզոք աշխատակցութեան վերածեր է. արդէն ժամանակէ մը ի վեր այն թերթին լեզուական ու խմբագրական ողորմելիութիւնը կը զգացուէր թէ խմբագրել քիչ շատ կարող ձեռքը տեղի ունած է ուրիշ տարրի մը: Ընդունուած բան մըն է որ երէկ «պատմա»-ի կամ «հազմա»-ի հակերուն առջեւ լեզուագարութիւնը ընող խանութպանը այսօր չի կըրնար գրասեղանի մը առջեւ անցնիլ և ժողովուրդը հրահանգող յօդուածներ ցափոտել:

Արդ, այսօր հայ լրագրի մը զեկը յիշեալ հանդամանքներով օժտուած մարդու մը ձեռքին մէջ գտնուելու տարօրինակ ու ցաւալի երեւոյթին հանդէպ կը զրոնտ ինք: Այս միեւնոյն մարդն է որ անցածները դուռաճան մակդիրով մկրտած էր ազգ. երկու աշխատաւորներ, ու այդ առթիւ մեր յարուցած բողոքին կը պատասխանէ իր վերջին թիւով՝ իր շուքէնի թափին մէջ այս անգամ աւելի ինքզինքը կորսնցուցած, ասինքն զրուածներու պատասխանելով մարդ զոհած կըլլայ իր արժանապատուութիւնը, բայց որովհետեւ ժողովուրդը երբեք կուրօրէն կը համոզուի իրեն պարզուած եղծ ու լպիրշ զաղափարներուն, կը զիջանք յանձն առնել այս զօհողութիւնը՝ վերջին անգամ ըլլալով:

Աւելի քան մէկ ու կէս սինա-կի մէջ պարզած իր անձնակառուցութիւնը (.) իրեն ձգելով հասկնալ և հրճուիլ անով, կը զիջանք միայն պատասխանել իր առաջ բերած փաստերուն:

Կրօն թէ՛ Իլիւրիկան Պատրիարքը մերժեց Սուլթանին շքանշանը: Ասիկա վրան բաց և արտառոց սուտ մըն է որ հրապարակ կը ներքէ առանց վարանելու: Սուլթանը երբեք ունէ պատուանշան չտուաւ Մատթէոս Յրբազանին, և սա ալ երբեք առիթ չունեցաւ մերժելու ասանկ պատուանշան մը: Մէկ:

Երկրորդ: Կրօն թէ՛ պուլկար վարդապետները մերժեց են Սուլթանին պատուանշանները: Իր տրամաբանութեամբը՝ ուրեմն այս կրօնաւորները զաւաճանութիւն ըրած էին քանի որ իրենց պատուանշան առաջարկուեր է: Այս կամ ոչ. այս մարդիկը զաւաճան էին. և եթէ երբեք պատուանշաններն ընդունէին՝ զաւաճան եղած պիտի ըլլային:

Բայց որովհետեւ այդ մարդիկը նիւթապէս, բարոյապէս և մանաւանդ քաղաքականապէս ունէ վախ և կախում՝ չունին թուրք կառավարութեան՝ մերժեցնելու իրենց կրօն առաջարկը: Այս միեւնոյն հանդամանքին մէջ կը գտնուին Պատրիարքարանի երկու գլխաւոր պիւրները. գլուխ է հասկնալ թէ ի՞նչ պիտի պատահէր եթէ անոնք մերժէին իրենց ընծայուած պատուանշանը, արդիւնք՝ յարմար առիթը մը եղած վերին բարի խօսութեան մը: Դաւաճան բառը գնդակի պէս խաղցընող կարծեցեալ խմբագրի պատանկ քաջութիւն ունեցած կամ երեւակայա՞ծ է երբեք:

Երրորդ: Կրօն թէ՛ արտասահմանի հայ վաճառականներէն ու մանք թուրք բանակին հանգանակութեան գրեթէ ստիպեալ մասնակցեցան, և պարտաւեցինք զիրենք: Հարկաւ արտասահման բառը ինքնին կը բաւէ ցուցնել համարու թէ այդ մարդիկ ստիպուած չէին այդ նպատան ընել: Ասիկա փառք է որ մէջտեղ կը բերուի:

Շուքէնը՝ ուրիշ բան մը ըսած չէ իր դաւաճան բառը արգարացնելու համար, քանի մը անձնականի գալիլ ուղի խօսքեր ալ լիբրտած ու փակած է իր ջատագովականը:

Բայց անշուշտ ասիկից աւելին սպասելու իրաւունք չունինք խմբագրէ մը որ ամենանախնական զաղափար մը իսկ չունի թուրք զբարենութեան վրայ և կը պահանջէ որ Պուլիս հրատարակուող թերթ մը կառավարական արարքի մը գէ՛մ գիտողութիւն ընէ (.):

ՇԱՒԱՐՇ

ՔՐՈՆՆԻԿ

—)(—

Կարինի աղգային հինգ վարժարանները ինչպէս նաև մանկանոցները ու մանկապարտեզները վերաբացուեր են օգոս. 31ին: Աւանտըները 1,500 է աւելի են, իսկ պաշտօնականներն թիւը 50ը կանցնի: Ամսական ծախք՝ 70 ոսկիի մօտ գումար մը: Կարնեցիին կրթական ջանքերը յոյժ զովելի են. միայն թէ պիտո՞քէն չափէն աւելի վտիտ կերակայ մեզ և հինգ նկանակով ու երկու ձուկով հինգ հազար հոգի կշտացնելու սպասութիւնը կը թողու մեր վրայ:

Պատրիարքարանը ծայրայեղ ցատուով կը բողոքէ կովկասի հայ թերթներուն այն գրուածքին գէ՛մ որ կը պնդէր թէ Պատրիարքարանի ծախքերը մանուկներու յատկացուած գրամէն կը հողացուին: Չենք հաստատ մենք ալ թէ ունէ գեղձում ի գործ դըրուած ըլլայ, նա մանաւանդ գիտնալով թէ մեր Պատրիարքարանը իր ծախքերը հոգալու համար, նշանուքի և կամ ունէ ուրիշ

գործի մը առթիւ ձեռք անցած հայը կազմակերպու գրութիւնը ընդունած և շատոնց ալ յաջողած է:

—Ամսոյս 15ին, Բերաի մէջ մենք է հայ անուանի գործարանապետ և մեքենագործ Յովսէփ Կալաֆեան: Իեղծ մարդը անմիջիկապ էր իր միակ որդւոյն այնքան խորհրդաւոր կերպիւ թունաւորուելով մեռնելէն ի վեր:

—Հոկտ. 1ի գիշերը Վանայ շրջակայ լեռները ձիւնով ծածկուեր են:

—Վերջէլ կայսրը Բրուսիական թագ պատուանշանին Ա. աստիճանը նուիրել է Յարութիւն Պատրիարքին, որ միւս պատրիարքներուն հետ կայսրը գիմաւուրս ը բարի գալուստ մաղթած էր:

—Երկուշարթի օր Գերմանիոյ կայսրը ու կայսրուհին այցելել են Երուսաղեմի հայոց Ս. Յակոբեանց վանքն ու եկեղեցին: Այցելութիւնը տեւեր է երկու ժամ: Սիրալիբ կերպով տեսակցել են Յարութիւն պատրիարքին հետ:

—Թոքատէ կը գրեն թէ տեղւոյն և Սեբաստիոյ աղգայիններէն եօթը հոգիներ որոնք չորս ամիսներ է լիբր բանտն էին, ազատ արձակուեր են:

—Ռուսուքի Տ. Կարապետ հօր տեղեկագրին վրայ, Կրօն. Ժողովը որոշեց Սիլիստրէի Տ. Յովակիմ քահանան նոյն տեղի եկեղեցիէն հեռացնել:

—Լ'Ամէնի մէջ կը կարգանք թէ ֆրանսական էլէնըման թերթին տաղանգաւոր հայ աշխատակից Պ. Անմեղեան, թատրերգութիւն մը յօրինել է «Օգոստոս փառ Գերին» անունով, որ Սուլթան Մուրատ Ե.ի երկար ժամանակեայ մարտիրոսութիւնը և անոր յարակից սրտաշարժ ու անզուրկ պարագաները կը պատկերացնէ:

—Պէլցի հայ վաճառականներէն Պ. Յակոբ Փոփովիչ, 40,000 ռուպլի նուիրել է տեղւոյն հայ զաղթականութեան: Այս գումարը ուսական կայս. պանդան դըրուած է, և 1,400 ռ. տոկոսին 400 ով ամեն տարի որը մը պիտի գրուի ուսական համալսարան մը, և մնացեալը՝ որբուհի մը օժտելու պիտի յատկացուի:

—Դ. Դար ուսական թերթէ մը քաղելով կը տեղեկացնէ թէ Պատրիարքի և Արքուի շրջականներէն 34 զաղթական բանուոր հայեր Պատրիարքարան են, և ի մտոյ ուսական ընկ. շոքեանաւով Թուրքիոյ սահմանը պիտի շրկուին:

—Կը ինդրուի մեզմէ ծանուցանել թէ հոկտ. 31ին, թատերական շքեղ ներկայացում մը պիտի տրուի ինպատ տեղւոյս Աղջկանց մասնաւոր Կրթարանին:

—)(—

ԲԱՂԱԲԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

Յ Բ Ա Ն Ս Ա

Նոր դահլիճը կաղմուեցաւ հե-
տեւեալ կերպով . Շարլ Տիւրիւի
նախարարապետ և ներքին գոր-
ծոց, Ֆրէսինէ՝ պատերազմական,

Նախարարութիւնը առաջին
անգամ ժողով գումարելով, որո-
շեց Տրէյֆիւսի խնդրին մէջ վճ-
ռաբեկ աստեղին որոշումներուն
համակերպելու : Փաշտատի խնդ-
րի մասին, հաւանութիւն ցոյց
տուաւ Պ. Տէլքասէի բռնած ուղ-
ղութեան :

Ֆրանսական կառավարու-
թիւնը հրաման ղրկեց Մառչան
հրամանատարին, որպէս զի փու-
թայ Փաշտատան պարպելու : Այս
վճիռը ճիշտ ժամանակին հասաւ
յարաճուն կերպով տարցող գը-
լուխները հանդարտեցնելու հա-
մար : Եւ սակայն ֆրանսական
մամուլին մէկ մասը կը գոչէ ա-
կաւին թէ ֆրանսան չկրնար Փա-
շտատան պարպել թանձր Անգլիացի
ատենախօսներուն և մամուլին
հաշուին կծու ակնարկութիւններ
ընելով կը բաւականանայ . իսկ
Ֆիկարո բաց է ի բաց կը յայ-
տարարէ թէ Փաշտատի համար
պատերազմը ընելը զուտ յիմա-
րութիւն է : Հետեւաբար այդ
անգլո-ֆրանսական խնդիրը կար-
գադրուելու ճամբու մէջ է : Են-
գլիական վերջին զինուորական
պատրաստութիւնները որոնք իս-
կոյն յաջորդած էին թուրքի և
ճէրպուրի ֆրանսական պատրաս-
տութեանց, մեծապէս նպաստած
ըլլալու են Տիւրիւի նախարար-
ութեան այս անգրանիկ խոհեմ
վճուին տրուելուն :

ԿՐԻՏԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Գանտիւի մէջ դարձեալ 5 իս-
լամ մահապարտներ կախաղան
հանուեցան, անգլիացի զօրքե-
րու վրայ եղած յարձակման մաս-
նակցած ըլլալուն համար : Ու-
րիշ քանի մը ոճրագործներ
քսանամեայ բռնի աշխատութեան
դատապարտուեցան :

Թուրք զինուորներու մեկնելէն
ետքը նորանոր փաստեր երեւան
ելած են թէ թուրք իշխանու-
թիւնները ինչ մեղապարտ մեղ-
սակցութիւն մը ունեցած են խռո-
վութեանց և արիւնհեղութեանց
միջոցին : Հաստատուեր է թէ
նոյն իսկ թուրք սպայներ թան-
կազին իրեզններու գողութիւն
ըրեր են :

Բէթիմօի ռուսական զինուոր-
ները իսլամ երեւելիներու խնդ-
րանքին վրայ, զիրենք զինուո-
րական շրջանակէն դուրս իրենց
ազարակները առաջնորդեր են
ուսկէց երկու տարիէ ի վեր հե-
ռացած էին :

Իսլամ ու քրիստոնեայ սկիւր
են եղբայրաբար վարուիլ իրարու

հետ : Ռուս զինուորները, ի պա-
տիւ Չարին, եռանդազին ընդու-
նելութիւն մը գտեր են :

Մինչ այս մինչ այն, Գուրը
վերջին ճիգեր կը թափէ իր ա-
նիծեալ հեռքը անպակաս ընելու
գժբախտ կղզիէն : Չորս պետու-
թիւններուն ծանուցադիր մը տա-
լով, խնդրեր է որ քանի մը
թոյլտուութիւններ տրուին, սուլ-
թանական գերիշխանութեան ա-
պացոյցները ըլլալու համար : Այս
թոյլտուութիւններն են՝ օսման-
եան դրօշակ պարզելու և պահա-
կազներ պահելու իրաւունք,
տարեկան ուրք մը և կառա-
վարչի ընտրութեան մէջ ձայն :

Աւելորդ է ըսել թէ բոլոր խնդ-
րանքներն ալ մերժուած են : Մեծ
յոյս կայ որ մօտերս Եօրկիոս իշ-
խանը առժամայ կառավարիչ
անուանուի, ինչ որ վերջնական
անուանմանը նախադուրը պիտի
ըլլայ :

Սուլթանը ա՛յն ատիճան հա-
մոզուեր է թէ ու է յամառու-
թիւն աղիտարեր պիտի դառնայ
իր գլխին, որ վերջնական կեր-
պով որոշում տուեր է, խնդրին
մէջ բոլորովին կրաւորական դեր
մը կատարել :

ՌՈՒՍԻԱ ԵՒ ՀՍՅԱՍՏԱՆ

Խրիմ հրատարակուող «Գրիմօր-
կի վէսթնիկ» որ Չարին Լիվա-
տիա գտնուած պահուն պալա-
տան պաշտօնական օսկանը կը
դառնայ, կը գրէ թէ՝ Պոլսոյ
դուսական գեսպան Պ. Զինովիէվ
հրաման ստացած է՝ յատկապէս
Տաճկահայաստանի գործերուն
համար իսկոյն Լիվատիա երթալ,
ուր կը գտնուի Չարը : Գեսպանը
իր կարծիքը պիտի յայտնէ այս
գործերը յարմարագոյն եղանա-
կով կարգադրելու խնդրին վրայ :
«Ստանտարտ» ռուսական թեր-
թին այս լուրը արտասպելով, կը
յարէ թէ այժմ որ թուրք զե-
նուորները Կրէտէ կը քաշուին,
ժամանակ է որ Հայաստանն ալ
այնպիսի պայմաններու տակ
գրուի, որ վերջին տարիներու
արհաւիրքները չը կրկնուին :

ԽՆԴԻՆ ԼՈՒՐՆԵՐ

Սուլթանը հրամայեր է որ
Պալատէքի մէջ, կոթող մը կանգ-
նուի, Գերմանիոյ կայսեր և
կայսրուհոյն ուղեւորութեան յի-
շատակին համար :

Սուլթանի պալատան երկը-
րորդ թարգմանիչ կարգուեր է
Օտար Մամուլի գիււանին Տնօրէն
Սէֆէրեան Նշան Էֆեն, պահե-
լով հանգերձ իր այդ պաշտօնը :

Նարտանի Բրավա կը գրէ
թէ Պոլսոյ պուլկարական գործա-
կա : ար Պ. Մարքով հրաժարեր
է :

Գուրը օտար գեսպանատանց
ծանուցադիր մը ղրկելով, խնդ-
րած է որ օտար նամակատուները
թուրքիաէ քաշուին . . . (և ինք
ազատ ըլլայ ուղածին պէս, նա-

մակներու նուիրական գաղտնի-
քը եղծանելու) :

Սաատէտին բաշա Պէռանաէ
հեռացած է առանց քրիստոնեայ
և իսլամ տարրերու մէջ հիմնա-
կան կարգադրութիւն մը ընել
կարենալու :

Հավասի մէջ զեկոյցը կընէ
թէ Բարիզի հաշտութեան յանձ-
նածոյովին մէջ ամերիկեան պա-
տուիրակները, իրենց կառավա-
րութեան անունով, պահանջեր
են որ Փիլիպպեանները բոլորո-
վին Մ. Նահանգներուն թող-
ուին :

Ժանտապարակ Բէշա հիւան-
դապահը մեռած է : Վիէննաի
հիւանդանոցին դէմ շատ մը
գանդաւորներ կան այս պահուս :
Քննութեան մը յայտնուեր է թէ
Ախտաբանական Հաստատութեան
ժանտախտի, յոլէրայի և ուրիշ
կարգի ահուելի հիւանդութեանց
միքորպներ կը . . . գողցուին ե-
ղեր հիւանդապահներու ձեռքով,
որոնք այդ տարօրինակ գողոն-
ները կը ծախեն եղեր բժիշկ-
ներու :

Կ. Պոլսէն Իզմիր մեկնող
թըքական շոգեհաւ մը 35 թուրք
խոզվարարներ փոխադրեր է :
Ո՛ւր . . .

Մակեթոնիաի Բէօբրիւլիւ
քաղաքին մէջ թաշկվիշ անուն
սերպ երեւելի մը սպաննուեր է
պուլկարի մը ձեռքով : Ժողովուր-
դը գոռած է : Մինչեւ հիմա այս
սպանութեան առթիւ ինը պուլ-
կար երեւելիներ ձերբակալուեր
են :

Պատույ Լէգէոնի խորհրդին
որոշումով, Էսթէրհազին պատ-
ուանչանը եւ առնուեցաւ :

Պուլկարիոյ իշխանը Սօպրա-
նիէի բացման առթիւ արտասա-
նած ճառին մէջ, մասնաւորա-
պէս պնդեր է երկրին սածած
բարի յարաբերութիւններուն
մասին Թուրքիոյ, Ռուսիոյ և Գա-
րաաղի հետ : Պահպանողական
մեծամասնութիւնը եռանդա-
զին ընդունելութիւն մը ըրեր է
այս ճառին : Սոպրանիէի ազա-
տականներու թիւը հազիւ 20 ի
կը հասնի :

ՎԻԼՀԷԼՄԻ ՈՒՂԵԻՌՈՒԹԻՒՆԸ

Գերմանիոյ կայսրը և կայսրու-
հին անցեալ շաբաթ օր, հետիտն
Երուսաղէմ մտեր և Ս. Յարութեան
տաճարը գացեր են : Վիլհէլմ Բ.
քէֆիէ գրեր է գլուխը, և ճշմա-
րիտ հաճի մը դարձեր : Կիրակի
օր ձիով Բէթղէհէմ գացեր է .
ապա Մննդեան եկեղեցին : Կայսրը
այցելեր է նաեւ Մուրը և ուրիշ
ուխտատեղիներ : Երկուշաբթի օր
նրկայ գտնուեր է բողոքական
եկեղեցիին օժման :

Ուրբաթ օր (երէկ) Հաճի Վիլ-
հէլմ Ետֆա պիտի դառնար, ան-
կէց ուղեւորելու Գերմանիա, ուր
նրկայ պիտի գտնու իրայխաթակի
բացման օրը :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Պուրկազի մեր բաժանորդներուն
կը ծանուցանենք թէ Տիար Յակոբ
Փափազեան յօժարած է մեր գործա-
կալութիւնը ստանձնել նոյն քաղա-
քին համար :

Ն. Խաչմանեան, Բողվուէնս . —
Ձեր փնտած անձը գտնուեցաւ :
Ռուսչուք բնակող Տ. Յարութիւն
Տօտուրեան մեզ կիմացնէ թէ Ռա-
թէոս Տօտուրեան իր ազգականն է
եւ թէ այս պահուս կը գտնուի Ռու-
մանիոյ Գորպայի քաղաքը, ուր
բեռնակրութեամբ կը գրադի :

Ով որ գիտէ քարակոփ (Մաշի)
Խասղեզի ցովհանէս Ռափայէլեանի
ուր գտնուելը, թող փութայ իմա-
ցնել իմազրուութեանս :

«Պիրատէրիք վէ հիւրիւյէթ»,
Մատթէի հազգընտա պիր գալ
հաֆթալարտան պէրու էտիլէն
վալ՝ եարըն էօյլէնտէն սօնկրա
սաաթ 4 տէ ֆազիլէթլու Պատ.
Հայկ Եարարմեան թարաֆընտան
տէվամ օլունաճագ սըր :



ԱՌԵԻՏՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱՅ
ՆԻՒՐՈՒԱ ԳՐԱԼԷՎ—ՎԱՌՆԱ

Գլխաւոր գործակալ Սօֆիա Բաղաթի
կառավարութեան կողմէն երաշ-
խաւորուած վիճակահանութեան

Պատիւ ունի ծանուցանել Վառնաի
և չրջակայից արգոյ հասարակու-
թեան թէ արգէն ի վաճառ հանած է
սոյն վիճակահանութեան տոմսերը,
իրենց բախը փորձել ուղղուերը կը
հրաւիրուին զիմել վերոյիշեալ գրա-
սենեակը այդ տոմսերէն գնելու հա-
մար : Փափագողներու ձրիաբար կը
զրկուի վիճակահանութեան յայտա-
գիրը եւ ամէն յարակից տեղեկու-
թիւններ : 5-6

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՇԱՐԺՈՒՄ»

Կը տպագրուին ամէն լեզուէ
այցետոմս, հասցետոմս, նամա-
կազուխ, հարսանեկան հրաւի-
րադիր, մահազդ, ինչպէս նաեւ
պրօշիւռներ :

Գիներն յոյժ գլուխամտաշիւ
Ուրիշ քաղաքներէ եկած
յանձնարարութիւններ ճշդու-
թեամբ և փութով կը կատար-
ուին :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ՍԱՊԱՆ-ԳԻԼԵԱՆ
(—)(—)
ԵԻՐՈՊԱՅԻ ԿԱՂԱՍԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ
ԲԵՐԼԻՆԻ ԴՆՇՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՅԵՏՈՅ
(—)(—)
Գին 1 Ֆրանք

Կը վաճառուի Շարժուի իմազ-
րատուեր :

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնաի մէջ կը վաճառուի Մու-
սալլա, թահաթիլ Կէօղիպէօյի բնա-
խաթութիւն, և Ապտիւրբաճի մզկի-
թին դէմը հայկական գրատուեր :
Ս. Չարպահանէլեանի քով :